«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 189.30. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները չներկայացվելը

1. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում կրթության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին չներկայացվելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

«ՀՈԴՎԱԾ 189.31. «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով սահմանված պահանջները խախտելը

1. Օրենքով նման պարտավորություն ունեցող տեղեկատվություն տնօրինողի կողմից պաշտոնական վեբ-կայքի պահպանումն ու սպասարկումը սահմանված կարգով չապահովելը.

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

2. Տեղեկատվական համակարգերում տվյալներ կամ տեղեկություններ մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող միջոցառումներ չիրականացնելը կամ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները չապահովելը կամ խախտելը, եթե տվյալ արարքը չի հանգեցրել անձնական տվյալների արտահոսքի և չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Նույն արարքը, որը հանգեցրել է անձնական տվյալների արտահոսքի, եթե այն չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև վեցհարյուրապատիկի չափով:

3. Պետական տեղեկատվական համակարգում (ներառյալ տեղեկատվական շտեմարանները) տվյալների մշակման, կառավարման, տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցների կիրառման և տեղեկատվական համակարգերի տվյալների փոխանակման շերտի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները խախտելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

4. Տվյալների շտեմարանների ստեղծման, ներդրման, կառավարման, շահագործման, օգտագործման, պահպանման, վերակազմավորման կամ դադարեցման օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները խախտելը, եթե տվյալ արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 193.3. Քաղաքացիական և ծառայողական զենքի և ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիաների պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, ինչպես նաև առանց քաղաքացիական և ծառայողական զենքի և ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիաների գործունեություն իրականացնելը

(վերնագիրը խմբ. 16.01.24 ՀՕ-45-Ն)

1. Քաղաքացիական և ծառայողական զենքի և ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիաների պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

2. Առանց քաղաքացիական և ծառայողական զենքի և ռազմական նշանակության արտադրանքի արտադրության լիցենզիաների գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:

(193.3-րդ հոդվածը լրաց. 05.10.22 ՀՕ-378-Ն, խմբ. 16.01.24 ՀՕ-45-Ն)

«Հոդված 193.4. «Կիբեռանվտանգության մասին» օրենքի պահանջները խախտելը

1. Ծառայություն մատուցողի տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում կիբեռանվտանգության նվազագույն պահանջները չապահովելը ՝

   առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհազարապատիկից տասհազարապատիկի չափով չափով:

2. Ծառայություն մատուցողի կողմից կիբեռանվտանգության ապահովման ներքին կանոնակարգ չունենալը, տեղեկատվական համակարգի կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի ռիսկերի գնահատում չիրականացնելը, ռիսկերի գնահատման սանդղակ չկազմելը, հավանական կիբեռմիջադեպի հետևանքների ծանրությունն ու ազդեցության մասշտաբները չորոշելը, կիբեռմիջադեպի կանխարգելման և լուծման միջոցառումների ծրագիր չհաստատելը՝

   առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

3. Ծառայություն մատուցողների կողմից «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին չծանուցելը, եթե արարքը չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

   առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթ հարյուրապատիկի չափով:

4. «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիբեռմիջադեպի հետևանքով հնարավոր ազդեցության ենթարկված անձանց կամ հանրությանը չծանուցելը՝

   առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

5. «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիբեռմիջադեպի ծանրության, ձեռնարկված միջոցառումների և կիբեռմիջադեպի ունեցած հետևանքների մասին կազմված հաշվետվությունը, կիբեռմիջադեպի առաջացման հնարավոր պատճառների, դրա լուծման համար կիրառված միջոցների, կիբեռմիջադեպի ծանրության, ունեցած հետևանքների, դրանց ազդեցության մասշտաբների, ծախսված ժամանակի, ֆինանսական միջոցների, դրա հետագա կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված քայլերի և միջոցառումների մասին վերջնական հաշվետվություն տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին չտրամադրելը՝

   առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:
6. Կիբեռանվտանգության ոլորտում միջազգային կամ ազգային ստանդարտներով սահմանված չափանիշները և պահանջները չպահպանելը կամ ոչ պատշաճ պահպանելը կամ համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ չունենալը՝

   առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհազարապատիկից տասհազարապատիկի չափով:
7. Ծառայություն մատուցողի կողմից «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված ժամկետում և պայմաններով կիբեռանվտանգության աուդիտ չանցնելը՝

   առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով:
8. Ծառայություն մատուցողի կողմից կիբեռանվտանգության աուդիտի արդյունքներով կազմված հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետում **տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին** չներկայացնելը՝

   առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:
9. Ծառայություն մատուցողի կողմից տեղեկատվական համակարգի և/կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի կիբեռանվտանգության ապահովման համար պատասխանատու անձ (կիբեռանվտանգության մասնագետ) չնշանակելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

10. **Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի** կողմից տեղեկատվական համակարգերում և/կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում կիբեռանվտանգության ապահովման միջոցների կիրառման և «Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված այլ պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս ծառայություն մատուցողից պահանջված անհրաժեշտ տեղեկատվությունը, տվյալները, փաստաթղթերը վերջինիս կողմից սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

11. Ծառայություն մատուցողի կողմից տեղեկատվական համակարգի կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի կիբեռանվտանգության ապահովումը կիբեռանվտանգության ապահովման ծառայություն մատուցողին «Կիբեռանվտանգության մասին» օրենքով սահմանված պահանջների խախտմամբ պատվիրակելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

12. Սույն հոդվածի 1-11-րդ մասերով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ տվյալ արարքի համար սույն հոդվածի համապատասխան մասով սահմանված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

13. Սույն հոդվածի 1-12-րդ մասերը տարածվում են «Կիբեռանվտանգության մասին» օրենքից բխող պարտավորությունները կամավոր ստանձնած իրավաբանական անձանց վրա:

Գ Լ ՈՒ Խ 12.2

(գլուխը լրաց. 22.12.23 ՀՕ-5-Ն)

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

171.12. Հոդված «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները խախտելը

1. Առանց զբոսաշրջային փաթեթի պայմանագրի զբոսաշրջային փաթեթ տրամադրելը կամ զբոսաշրջային ծառայություններ մատուցելը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող պարտադիր տեղեկությունները զբոսաշրջային փաթեթի պայմանագրում չներառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման կողմից իր կանոնադրության փոփոխություններն առանց Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ համաձայնեցնելու ընդունելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

3. Հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից սպառողի և նրա գույքի անվտանգությունն ապահովելու համար ներքին կանոնակարգ չհաստատելը կամ դրա պահանջները չպահպանելը կամ այդ կանոնակարգի՝ պետական լիազոր մարմնի սահմանած նվազագույն պահանջները չապահովելը կամ «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները չհավաքելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4. Հյուրանոցային տնտեսության օբյեկտում հյուրանոցային ծառայություն մատուցող անձի կողմից սպառողների համար տեսանելի հատվածում «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները չտեղադրելը կամ սահմանված ձևին համապատասխան չտեղադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

5. Նոր կառուցվող հյուրանոցներում և առողջարաններում հաշմանդամություն ունեցող անձանց համար հյուրանոցային ծառայություններից օգտվելու և ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն ստանալու հնարավորություն չապահովելը կամ այդ մասին հյուրերի համար տեսանելի հատվածներում տեղեկատվություն չտեղադրելը կամ չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

6. Զբոսավարի կամ ուղեկցորդի պարտականություններ կատարելիս տեսանելի հատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ձևի անվանաքարտ չկրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

7. Առանց «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված որակավորման զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

8. Առանց որակավորման զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի կողմից «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարբերանշան օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

9. Տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կողմից զբոսաշրջային ավտոբուսի որակավորում չունեցող տրանսպորտային միջոցով փոխադրելը կամ զբոսաշրջային երթուղի կազմակերպելը, եթե անձանց քանակը հավասար է կամ գերազանցում է 9-ը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

10. Զբոսաշրջային ավտոբուսն առանց Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի նշանը զբոսաշրջային ավտոբուսի դիմապակու վրա՝ տեսանելի հատվածում, փակցնելու շահագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

11. Առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու իրավունքի զբոսաշրջային ծառայություններ մատուցելուն ուղղված թիրախավորված առաջարկներ ներկայացնելը մեկ կամ ավելի թվով անձանց հրապարակային վայրերում՝ նպատակ ունենալով համոզելու կամ հարկադրելու այդ անձանց օգտվելու զբոսաշրջային ծառայությունից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

12. Օտարերկրացու կողմից առանց «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված որակավորման զբոսավարի կամ ուղեկցորդի ծառայություններ մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

13. «Զբոսաշրջության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները (բացառությամբ սույն հոդվածի 1-11-րդ մասերով նախատեսված դեպքերի) խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

(171.12-րդ հոդվածը լրաց. 22.12.23 ՀՕ-5-Ն)

«ԳԼՈՒԽ 12.3

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 171.13. Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին, հանձնաժողովի անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելը

1. Իրավաբանական անձի պաշտոնատար անձի կողմից տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին, հանձնաժողովի անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելը՝ իրավաբանական անձի պաշտոնատար անձի համար՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

2. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձի կողմից տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին, հանձնաժողովի անդամին կամ աշխատակցին օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասու պաշտոնատար անձի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

3. Ֆիզիկական անձի կողմից **տեղեկատվական համակարգերի կարգավորման** հանձնաժողովի, հանձնաժողովի անդամի կամ աշխատակցի՝ օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելը ֆիզիկական անձի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Հոդված 171.14. Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի որոշմամբ (եզրակացությամբ) ամրագրված խախտումները սահմանված ժամկետում

չշտկելը, որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարելը

1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձի, իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի կողմից տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի որոշմամբ կամ եզրակացությամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չշտկելը, որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարելը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասու պաշտոնատար անձի իրավաբանական անձի պաշտոնատար անձի կամ ֆիզիկական անձի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Հոդված 243. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը

(վերնագիրը խմբ. 16.01.24 ՀՕ-45-Ն)

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը քննում է սույն օրենսգրքի 148-րդ, 169.24-րդ և 193.3-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակազմի իրավասու պաշտոնատար անձը:

(243-րդ հոդվածը խմբ. 14.06.94 ՀՕ-105, 16.01.24 ՀՕ-45-Ն)

«Հոդված 243.1 «Կիբեռանվտանգության մասին» օրենքով, «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքով սահմանված պահանջների խախտման համար վարչական տույժեր նշանակելու իրավասություն ունեցող մարմինը

1. «Կիբեռանվտանգության մասին» օրենքով անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ համարվող ծառայություն մատուցողի կամ «Կիբեռանվտանգության մասին» օրենքից բխող պարտավորություններին կամավոր ստանձնած իրավաբանական անձի նկատմամբ

օրենքով նախատեսված կիբեռանվտանգության ոլորտում կարգավորող և վերահսկող մարմին առկա չլինելու կամ կարգավորող և վերահսկող մարմնին՝ կիբեռանվտանգության ոլորտում վերապահված գործառույթների իրականացման իրավական կարգավորման բացակայության դեպքում «Կիբեռանվտանգության մասին» օրենքի պահանջների խախտման գործերը քննում է տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովը:

2. Պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին հարաբերությունների ոլորտներում, ինչպես նաև «Կիբեռանվտանգության մասին» օրենքի համաձայն՝ Կառավարության կողմից սահմանված ցանկով հաստատված և «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքով սահմանված լիազորված մարմնին վերապահված տեղեկատվական համակարգերի և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նկատմամբ «Կիբեռանվտանգության մասին» օրենքի պահանջների խախտման գործերը քննում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը:

3. Պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից «Կիբեռանվտանգության մասին» օրենքի պահանջների խախտման գործերը քննում են համապատասխան պետական մարմինները, որոնց անունից վարչական տույժեր նշանակում է պետական մարմնի ղեկավարը:»:

4. Սույն օրենսգրքի 189.29 հոդվածով սահմանված իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական ակտեր կայացնում է տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովը:

5. Սույն օրենսգրքի 12.3 գլխով սահմանված իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական ակտեր կայացնում է տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովը:»: